

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հունվարի 2002 թվականի № 41

թաղ. Երևան

Հրագործական արտադրատեսակներին ներկայացվող
անվտանգության պահանջների մասին

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում 2001-2004 թվականների ընթացքում համապատասխան բնագավառների տեխնիկական կանոնակարգերի մշակման ժամանակացույցը հաստատելու մասին» N 852 որոշմամբ (Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի նոյեմբերի 22-ի N 822 որոշման խմբագրությամբ) հաստատված ժամանակացույցի 123-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել, որ՝

ա) Հայաստանի Հանրապետությունում հրագործական արտադրատեսակներին ներկայացվող անվտանգության պահանջները և դրանց փորձարկման մեթոդները պետք է համապատասխանեն ՀՍ 2/4-2001 «Արտադրատեսակներ հրագործական. Անվտանգության ընդհանուր պահանջներ» և ԳՕՍ Ռ 51271-99 «Արտադրատեսակներ հրագործական. Սերտիֆիկացման փորձարկումների մեթոդներ» ստանդարտների պահանջներին.

բ) ներմուծվող և արտադրվող հրագործական արտադրատեսակների կիրառման (շահագործման) հրահանգը և փաթեթվածքների վրայի մակնշվածքները պետք է շարադրված լինեն հայերենով կամ զուգակցվեն այլ լեզուներով՝ համաձայն պայմանագրի:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը՝ մինչև 2002 թվականի մարտի 1-ը հաստատել հրագործական արտադրատեսակները պահելու և դրանք զանգվածային միջոցառումների ժամանակ օգտագործելու կանոնները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունվարի 15-ից :